Ընտրություններ հավերժության համար, Մաս 1

Այս երեկո իմ նպատակն է համոզվել, որ դուք հստակ գիտակցում և հասկանում եք այն ճշմարտությունը, որ այս կյանքն իսկապես այն ժամանակն *է*, երբ դուք պետք է որոշեք, թե *դուք* ինչպիսի կյանքով եք ուզում ապրել հավերժության մեջ: Հիմա *է* ձեր ժամանակը «պատրաստվելու համար հանդիպելու Աստծուն» [տես Ալմա 12.24, 34.32]: . . .

Յուրաքանչյուր արդար ընտրություն, որը դուք կկատարեք այստեղ, հսկայական օգուտ կտա ձեզ այս կյանքում: Բայց մահկանացու կյանքում կատարած արդար ընտրությունները աներևակայելի օգուտ կտան հավերժական կյանքում: Եթե դուք ընտրեք ուխտեր կապել Աստծո հետ և հավատարիմ մնալ այդ ուխտերին, «[ձեր] գլխին փառք կավելացվի հավիտյանս հավիտենից» [Աբրահամ 3.26]: . . .

Հակառակորդը, իհարկե, չի ուզում, որ դուք նույնիսկ մտածեք վաղվա օրվա մասին, էլ չեմ խոսում հավիտենական կյանքի մասին: Բայց խնդրում եմ, անտեղյակ կամ միամիտ մի եղեք մահկանացու կյանքի հնարավորությունների և մարտահրավերների վերաբերյալ: Դրա համար պետք է հասկանաք երեք հիմնարար ճշմարտություն, որոնք կօգնեն ձեզ նախագծել ձեր հետագա ընթացքը. . . .

Նախ՝ իմացեք այն ճշմարտությունը, թե ով եք դուք: Կարծում եմ, որ եթե Տերը խոսեր ձեզ հետ այս երեկո, առաջին հերթին Նա կցանկանար համոզվել, որ դուք հասկանում եք ձեր ճշմարիտ ինքնությունը: Իմ սիրելի ընկերներ, դուք բառացիորեն Աստծո հոգևոր զավակներն եք: Դուք այս ճշմարտությունը երգել եք՝ սովորելով «I Am a Child of God» [*Hymns*, հմր. 301] օրհներգի բառերը: Բայց արդյո՞ք այդ հավերժական ճշմարտությունը դրոշմված է ձեր սրտում: Արդյո՞ք այս ճշմարտությունն օգնել է ձեզ գայթակղության բախվելիս:

Վախենամ, որ այնքան հաճախ եք լսել այս ճշմարտությունը, որ այն ավելի շուտ որպես կարգախոս է հնչում, քան աստվածային ճշմարտություն: Այնուամենայնիվ, այն, թե ինչ եք մտածում ձեր իրական ինքնության մասին, ազդում է ձեր գրեթե յուրաքանչյուր որոշման վրա, որը դուք երբևէ կկայացնեք: . . .

. . .*Ո՞վ եք դուք:*

Առաջին հերթին դուք Աստծո զավակն եք:

Երկրորդ՝ որպես Եկեղեցու անդամ, դուք ուխտի զավակն եք: Եվ երրորդ՝ դուք Հիսուս Քրիստոսի աշակերտն եք:

Այս երեկո ես խնդրում եմ ձեզ *չփոխարինել* այս երեք կարևոր և անփոփոխ որակավորումները այլ որակավորումներով, քանի որ դա կարող է խանգարել ձեր առաջընթացին կամ պիտակավորել ձեզ ըստ կարծրատիպերի, որոնք կխանգարեն ձեր հավերժական առաջընթացին: . . .

Կան տարբեր պիտակներ, որոնք, իհարկե, կարող են ձեզ համար շատ կարևոր լինել: Խնդրում եմ ինձ սխալ չհասկանաք: Ես չեմ ասում, որ այլ դասակարգումներն ու որակավորումները էական չեն: Ես պարզապես ասում եմ, որ ոչ մի որակավորում չպետք է *հեռացնի*, *փոխարինի* կամ *առաջնահերթ լինի* այս երեք մնայուն դասակարգումներից՝ «Աստծո զավակի», «ուխտի զավակի» և «Հիսուս Քրիստոսի աշակերտի»:

Ցանկացած որակավորում, որն անհամատեղելի է այդ երեք հիմնական դասակարգումների հետ, ի վերջո, ձեզ կհիասթափեցնի: Այլ պիտակները ժամանակի ընթացքում կհիասթափեցնեն ձեզ, քանի որ նրանք զորություն չունեն առաջնորդելու ձեզ դեպի հավերժական կյանք՝ Աստծո սելեստիալ արքայությունում: . . .

Սխալ մի հասկացեք. ձեր ներուժն աստվածային է: Երբ ջանասիրաբար փնտրեք, Աստված ձեզ հուշումներ կտա, թե ով կարող եք դառնալ: (Ռասսել Մ. Նելսոն, «Ընտրություններ հավերժության համար» [համաշխարհային հոգևոր հավաք չափահաս երիտասարդների համար, 15 մայիսի, 2022], broadcasts.ChurchofJesusChrist.org)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_544_handout-1